ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՅԹԱՂ
ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩИНА
АЙТАХ

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, COMMUNITY OF HAYTAGH

23.11.2012թ. N111

ՀՀ Արմավիրի մարզպետ

պրն՝ Ա. Ղահրամանյանին

Հարգարժան մարզպետ.

Ձեզ ենք ուղարկում ՀՀ Արմավիրի մարզի Հայթաղ գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1 նիստի որոշումները:

Առդիր 6 թերթ:

Հայթաղ համայնքի ղեկավար՝ Ս. Վարդանյան

Մուտք թիվ 10782-12
03 — 12 — 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԹԱՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

---

23 նոյեմբերի 2012 թ. N3

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 23-ի N1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելված N1-ի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆԱՊԱՀ
1.Ալեքսանյան Ալիկ	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
2.Արշակյան Արման	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
3.Մովսիսյան Գվիդոն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
4.Հայրապետյան Վոլոդյա	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
5.Բաղդասարյան Համլետ	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
6.Գևորգյան Նորիկ	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
7.Համբարձումյան Յուրիկ	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
8.Մելքոնյան Գոռ	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
9.Խաչատրյան Վիգեն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն

Համայնքի ղեկավար՝ Ս.Վարդանյան

2012թ. նոյեմբեր 23, գ.Հայթաղ

Հավելված N1
Հայթաղ համայնքի
ավագանու 2012 թվականի
նոյեմբերի 23-ի N1 նիստի N3 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղ գյուղական համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՀԱՅԹԱՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

---

23 նոյեմբերի 2012 թ. N 4-Ն

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերը՝ /համաձայն հավելված N2-ի/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆԱՊԱՀ
1.Ալեքսանյան Ալիկ	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
2.Արշակյան Արման	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
3.Մովսիսյան Գվիդոն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
4.Հայրապետյան Վոլոդյա	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
5.Բաղդասարյան Համլետ	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
6.Գևորգյան Նորիկ	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
7.Համբարձումյան Յուրիկ	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
8.Մելքոնյան Գոռ	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
9.Խաչատրյան Վիգեն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն

Համայնքի ղեկավար՝ Ս.Վարդանյան

2012թ. նոյեմբեր 23, գ.Հայթաղ

ՀԱՎԵԼՎԱԾ N2
ԱՐՄԱՎԻՐԻ ՍԱՐԳԻ
ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N4-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիմնական օբյեկտների համար.

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 /տաս հազար/ դրամ.

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000/տասնհինգ հազար/դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝1000/հազար/ դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 /երկու հազար/դրամ:

2. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 500/հինգ հարյուր /դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելված է 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 /հինգ հազար/դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 4000/չորս հազար/ դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար 4000 /չորս հազար / դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

2)հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, և /կամ/ սեղմված բնական կամ, հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղումների տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50.000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը

24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 35 000/երեսունհինգ հազար /դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 / հիսուն հազար/.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 / հինգ հարյուր հազար/.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000/երկու հարյուր հիսուն հազար/.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000/ հարյուր հազար/:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000/երկու հազար/ դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար / դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար / դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000/հինգ հազար /դրամ:

11. Գյուղապետարանի կողմից մրցույթներ աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար10000 /տաս հազար դրամ/:

12. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց 1000 դրամ/մեկ հազար դրամ/ :